

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

«Հունվարի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խաղաղութիւն ամենեցուն և ամենուր» (Ժամագիրք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էին նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Լենինգրադի հոգևոր ակադեմիայի դասախոս հայր Բորիս Բեզունովն ու մի խումբ ուսանողներ:

*
* *

Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի Հոգեհանգիստ վասն հանգուցեալոց»:

*
* *

Հունվարի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ահաւասիկ Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի» (Հովհ. Ա. 29) բնաբանով:

*
* *

Հունվարի 13-ին, երկուշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

Հունվարի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական երեկո, որի ընթացքում պարսկահայ ուսուցչուհի Լիդա Պերպերյանը ներկայացրեց Վասպուրականի միջնադարման մի վիպերգ և բնութագրեց շարականների զարգացման ընթացքն ու գրական-գեղարվեստական արժանիքները, որպես ապացույց ունկնդիրներին ներկայացնելով վիպերգի և շարականների երաժշտական կատարումներ պարս-

կահայ երաժիշտների ձայնագրություններով:

Երեկոյին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 15-ին, հինգշաբթի.—Տօն ծընընդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Ս. Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռում. ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավագ քհն. Սիմոնյանը:

*
* *

Հունվարի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից» (Մատթ. Գ 17) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ նորոգ հանգուցյալներ՝ ֆրանսահայ մեծ ազգասեր, Մայր Աթոռի բարերար տիար Արշամ Պապյանի և լիբանանահայ գրական, ազգային-հասարակական գործիչ տիար Գառնիկ Ադդարյանի հիշատակին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը:

*
* *

Հունվարի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Հունվարի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ներկայացնելով Ս. Վահան Գողթնեցու կյանքն ու գործը (տես էջ 41):

*
* *

Հունվարի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական երեկո, որի ընթացքում հանրաճանաչ ասմունքող Վերա Հակոբյանը ունկնդիրներին ներկայացրեց հայ բանաստեղծների ստեղծագործություններից:

Երեկոյին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՎՃԻՌ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մայր Աթոռիս նյութական կարևոր վնաս հասցնելու կանխամտածված արարքի համար, Վեհափառ Հայրապետի 5 հունվար 1987 թվականի վճռով, Մաշտոց և Պսակ աբեղաները հեռացված են միաբանության շարքերից և զրկված իրենց եկեղեցական կարգից, դասվելով աշխարհական դասում Մեսրոպ Խաչիկյան և Ստեփան Կարապետյան անուններով:

Ս. Էջմիածին,
14 հունվար 1987 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ